ՀՏԴ 304

Տնտեսագիտություն

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
E-mail: tatoulm@gmail.com

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է Արցախի և Հայաստանի ժողովրդագրական խնդիրներին և պետության առաջնահերթություններին: Մասնավորապես նշվում է, որ ժողովրդագրական քաղաքականությունը պետական մարմինների և այլ սոցիալական հաստատությունների նպատակաուղղված գործունեությունը պետք է լինի՝ միտված բնակչության վերարտադրության գործընթացների կարգավորմանը, ինչը պետք է նախատեսի բնակչության կառուցվածքի, դինամիկայի, թվաքանակի, բնակեցման և որակի միտումների պահպանում կամ դրանց նպատակային փոփոխություն: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել այն դիտարկել որպես պետության սոցիալական քաղաքականության կարևոր մաս՝ հատուկ իր նպատակներով և դրանց հասնելու հստակ մեթոդներով: Արցախում և Հայաստանում ժողովրդագրական քաղաքականությունը պետք է կրի ազգային բնույթ և միտված լինի ծնելիության աճին ու ազգաբնակչության թվի շեշտակի ավելացմանը: Մասնավորապես, օրենսդրության մեջ կարևոր է խթանել ոչ միայն երիտասարդ, այլև ավելի հասուն տարիքի զույգերի ամուսնությունները, նպաստել ոչ միայն բազմազավակ, այլև փոքր ընտանիքներին՝ նրանց տրամադրելով մի շարք արտոնություններ:

Բանալի բառեր՝ *սոցիալական անվտանգություն, ազգաբնակչություն, Արցախ, ժողովրդագրություն, ռազմավարություն, բնական աճ, ծնելիություն, երիտասարդ ընտանիք:*

Т. Манасерян

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ АРЦАХА И АРМЕНИИ И ГОСУДАРСТВЕННЫЕ ПРИОРИТЕТЫ

Статья посвящена демографическим проблемам Арцаха и Армении и приоритетам государства. В частности, отмечается, что демографическая политика должна представлять собой целенаправленную деятельность государственных органов и иных социальных институтов, направленную на регулирование процессов воспроизводства населения, которая должна обеспечивать сохранение структуры, динамики, численности, расселенности и качественных тенденций или их целенаправленное изменение. В настоящее время возникла необходимость рассматривать ее как важную часть социальной политики государства, имеющую конкретные цели и четкие методы их достижения. Демографическая политика в Арцахе и Армении должна носить национальный характер и должна быть направлена на рост рождаемости и значительное увеличение численности населения страны. В частности, важно в законодательстве способствовать заключению браков не только молодых, но и пожилых пар, поддерживать не только многодетные, но и малодетные семьи, предоставляя им ряд льгот.

Ключевые слова: *социальное обеспечение, население, Арцах, демография, стратегия, естественный прирост, рождаемость, молодая семья*

T. Manaseryan

DEMOGRAPHIC PROBLEMS OF ARTSAKH AND ARMENIA AND STATE PRIORITIES

The article is devoted to the demographic problems of Artsakh and Armenia and the priorities of the state. In particular, it is noted that demographic policy should be a purposeful activity of state bodies and other social institutions aimed at regulating

the processes of population reproduction, which should ensure the preservation of the structure, dynamics, numbers, population and qualitative trends or their purposeful change. At present, there is a need to consider it as an important part of the social policy of the state, which has specific goals and clear methods for achieving them. The demographic policy in Artsakh and Armenia should be of a national character and should be aimed at increasing the birth rate and a significant increase in the population of the country. In particular, it is important to promote the marriage of not only young, but also elderly couples in the legislation, in order to support not only families with many children, but also families with few children, providing them with a number of benefits.

Key words: *social security, population, Artsakh, demography, strategy, natural increase, birth rate, young family*

Ներածություն

Ժողովրդագրական խնդիրները չեն սահմանափակվում միայն բնակչության վերարտադրությամբ կամ նրա չափերի փոփոխությամբ՝ մահացության և ծնունդների տարբերության արդյունքում: Իրականում կարևորվում են նաև հասարակության զարգացման, ազգաբնակչության ժողովրդագրական պատկերը կանխորոշող զանգվածային արտագաղթը, «ուղեղների արտահոսքը», բնակչության ծերացումը և այլ խնդիրներ: Միաժամանակ, ժողովրդագրական պատկերի վրա էական ազդեցություն է գործում ազգաբնակչության սոցիալական պաշտպանության մակարդակը իրավական և ժողովրդագրական առումով, այն է՝ օրենքի և ժողովրդագրության փոխազդեցությունը: Հետևաբար, մեր առաջնահերթ խնդիրներից են սոցիալ-ժողովրդագրական գործընթացների պետական-իրավական կարգավորումը, ինչպես նաև բնակչության քանակի և որակի հիմնահարցերը: Վերջապես, կարևոր է ուսումնասիրել սոցիալական պաշտպանության իրավական խնդիրները, վերլուծել ժամանակակից պայմաններում Արցախում և Հայաստանում ծնելիության, միգրացիայի և զբաղվածության փոխազդեցությունները:

Գրականության ակնարկ

Իրականում Արցախի և Հայաստանի ժողովրդագրական խնդիրների, պետության առաջնահերթությունների վերաբերյալ գրականությունն այնքան էլ հարուստ չէ, մասնավորապես, երբ կարիք կա ուսումնասիրելու

մեր օրերում տեղի ունեցող իրադարձություններն ու դրանց արդյունքում ձևավորված ժողովրդագրական իրավիճակը: Ի բացառություն մեկ-երկու վերլուծության, հայ տնտեսագետների մեծ մասը սևեռված է հարկային բարեփոխումների, ֆինանսական համակարգի, գյուղատնտեսության կամ այլ ճյուղերի առանձին հիմնահարցերի վրա, անտեսելով ամենակարևորը՝ իր բնօրրանում հայ մարդու գոյությունը և զարգացումը ապահովելու սպառնալիքների դաշտը: Վ. Խոջաբեկյանից հետո, ժողովրդագրության ոլորտում մասնագիտացած տնտեսագետներն այնքան էլ շատ չեն՝ Վ. Թովմասյանը (ԱՄՆ), Ռ. Եգանյանը (ՀՀ) և Բ. Ասատրյանը (ՀՀ): Հետևաբար, գրականության պարզունակ ակնարկ անգամ հնարավոր չէ ներկայացնել առանց մտահոգվելու ժողովրդագրության հայկական ժամանակակից դպրոցը ձևավորելու և զարգացնելու մասին:

Պետության դերը

Հիշատակված խնդիրները չեն կարող լինել միայն փորձագիտական հանրության մտահոգության առարկան: Դրանք պահանջում են ոչ միայն պետության կողմից և պետական կառույցների աջակցությամբ իրականացվող, վիճակագրական հստակ տվյալներով հիմնավորված ուսումնասիրություններ, այլև իրավիճակի շարունակական մշտադիտարկում և առավել խոցելի ենթաոլորտների թիրախավորում և համարժեք քաղաքականության մշակում ու իրականացում: Մասնավորապես, հարկավոր է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները.

- բնակչության վերարտադրության վրա պետական քաղաքականության ազդեցության վերլուծություն.
- ժողովրդագրական իրավիճակի վերլուծություն ու Արցախի և Հայաստանի բնակչության զարգացման աճի հեռանկարների հստակեցում.
- սոցիալական անվտանգության հարցերում պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված գիտական առաջարկությունների մշակում.
- սոցիալական պաշտպանության մարմինների գործունեության վերլուծություն.
- միգրացիայի, գործազրկության, զբաղվածության խնդիրների վերլուծություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ 21-րդ դարում գլոբալացման ակտիվ գործընթացների արդյունքում սրվել են մարդկությանը մտահոգող գլոբալ խնդիրները: Այս առումով, պետությունների հետագա զարգացման մեջ մարդկանց որակական հետընթացի և ֆիզիկական

ոչնչացման բազմաթիվ վտանգներ կան: Համաշխարհային մասշտաբով ժողովրդագրական խնդիրը կապված է առաջին հերթին բնակչության սրընթաց աճի հետ (ներկայումս այն անցել է 8 միլիարդի սահմանը[1]), ժողովրդագրական պայթյունի հետ: Դա նշանակում է մարդկության բնական աճի բարձր տեմպեր: Ըստ գիտնականների կանխատեսումների՝ Երկրի բնակչությունը առաջիկա տասնամյակում կկազմի մոտավորապես տասը միլիարդ բնակիչ:

Բնակչության անհավասար բաշխվածությունն, իր հերթին, բացասաբար է անդրադառնում նաև շրջակա միջավայրի վրա:

Ժողովրդագրական քաղաքականությունը և հայ ընտանիքի մարտահրավերները

Աշխարհում բնակչության ավելցուկը հանգեցնում է ռեսուրսների նվազմանը: Հենց այս խնդիրն էլ ընկած է ժամանակակից աշխարհում զինված հակամարտությունների և պատերազմների հիմքում: Բացառություն չեն նաև Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեջանի և Թուրքիայի ցեղասպան գործողությունները, որոնք հետապնդում են նաև բնական ռեսուրսների նոր աղբյուրների զավթում, ինչը տեղի ունեցավ, մասնավորապես, 44-օրյա պատերազմի արդյունքում և դրանից հետո:

Այս ամենը, բնականաբար, անդրադառնում է նաև իրենց բնօրրանում հայերի և հայ տեսակի վերարտադրության տեմպերի և ծավալների վրա: Հետևաբար, պետք է նշել, որ առկա է հստակ փոխհարաբերակցություն սոցիալ-տնտեսական զարգացման, պետության դիրքերի ամրացման / թուլացման և ժողովրդագրական գործընթացների միջև, որն, ի դեպ, մասնագիտական գրականության մեջ կոչվում է *ժողովրդագրական անցման տեսություն*[2]:

Մեր պարագայում պետք է հաշվի առնել, որ առավել բնութագրական են ստորև ներկայացված և գոյություն ունեցող ազգաբնակչության վերարտադրության չորս հիմնական տեսակից վերջին երկուսը.

* ավանդական, որը բնութագրվում է բարձր մահացությամբ և բարձր ծնելիությամբ.

* ընդլայնված, որը բնութագրվում է ծնելիության աճով և մահացության նվազմամբ, ինչը նշանակում է բնակչության զգալի աճ.

---

[1] *Տես՝ World Population Reaches 8 Billion, https://www.nytimes.com/2022/11/15/world/world-population-8-billion.html*

[2] *Բնական աճի ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրները. Բնակչության բնական աճի բանաձևը: https://podarilove.ru/hy/strany-s-naimenshimi-pokazatelyami-estestvennogo-prirosta/*

* պարզ, որը բնութագրվում է համապատասխանաբար ցածր մահացությամբ և ցածր ծնելիությամբ, որի դեպքում բնակչության աճը դանդաղում է.

* նեղացված, որը բնութագրվում է մահացության նվազմամբ և ծնելիության կտրուկ անկմամբ, ինչպես նաև բնակչության ընդգծված ծերացումով:

Հավելենք, որ մեր տարածաշրջանում, հատկապես՝ հարևան երկրները տարբերվում են իրենց սոցիալ-տնտեսական զարգացմամբ, համապատասխանաբար, գտնվում են ժողովրդագրական անցման տարբեր փուլերում: Միաժամանակ, նկատվում է բնակչության վերարտադրության երկու այլ տեսակ.

1. Պարզ ու նեղ, բնորոշ զարգացած երկրներին: Այն բնութագրվում է ծնելիության և մահացության ցածր մակարդակով, ինչպես նաև կյանքի զգալի տևողությամբ.

2. Ընդլայնված, բնորոշ զարգացող երկրներին: Այն բնութագրվում է ծնելիության և մահացության բարձր ցուցանիշներով՝ կյանքի կարճ տևողությամբ:

Հայտնի է նաև ժողովրդագրական անցման 4 փուլային մոդելը[1]:



Գծապատկեր 1. Ժողովրդագրական անցման 4 փուլային մոդելը:

[1] *Տես՝ https://orbeli.am/hy/post/238/2019-06-19/%20%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6*

Ակնհայտ է, որ վերարտադրողական գործընթացների վրա ազդելու համար պետությունը պետք է ժողովրդագրական նպատակային քաղաքականություն վարի։

Մեր համոզմամբ, պետության ազդեցությունը ժողովրդագրական հարաբերությունների վրա արտահայտվում է պետության գիտականորեն հիմնավորված և իր բնույթով ազգային ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրականացման մեջ։

Ժողովրդագրական քաղաքականությունը, որպես կանոն, պետական մարմինների և այլ սոցիալական հաստատությունների նպատակաուղղված գործունեությունը պետք է լինի՝ միտված բնակչության վերարտադրության գործընթացների կարգավորմանը, ինչը պետք է նախատեսի բնակչության կառուցվածքի, դինամիկայի, թվաքանակի, բնակեցման և որակի միտումների պահպանում կամ դրանց նպատակային փոփոխություն: Հետևաբար, այն կարևոր է դիտարկել որպես պետության սոցիալական քաղաքականության օրգանական մաս՝ հատուկ իր նպատակներով և դրանց հասնելու հստակ մեթոդներով։

Ժամանակակից աշխարհում զարգացող երկրների մեծ մասը սահմանափակող քաղաքականություն է վարում, որն ուղղված է ծնելիության մակարդակի նվազեցմանը և (մինչև 5 տարեկան) երեխաների մահացության նվազեցմանը։ Մեր պարագայում, մանկամահացության կրճատմանը միտված ժողովրդագրական քաղաքականությունը պետք է զուգորդվի ծնելիության աճի հստակ քայլերով։ Մասնավորապես, օրենսդրության մեջ կարևոր է խթանել ոչ միայն երիտասարդ, այլև ավելի հասուն տարիքի զույգերի ամուսնությունները, նպաստել ոչ միայն բազմազավակ, այլև փոքր ընտանիքներին՝ նրանց տրամադրելով մի շարք արտոնություններ։

Անկախության տարիներին տարաբնակեցման ոչ արդյունավետ քաղաքականությունը, իսկ առանձին տարիներին՝ դրա բացակայությունը Արցախում և Հայաստանում, բնակչության և ռեսուրսների անհամաչափ բաշխումը թույլ չեն տվել արդյունավետ և համաչափ զարգանալ, ինչն էլ միայն հանգեցրել է աղքատության մակարդակի աճին (Հայաստանում 2023 թ. սկզբին կանխատեսվում է 42 տոկոս աղքատություն)[1]։ Այս իմաստով բոլորովին մխիթարական չէ այն իրողությունը, որ ոչ բոլոր զարգացող երկրներն են թիրախավորված ժողովրդագրական քաղաքականություն վարում։ Ինչ վերաբերում է զարգացած երկրներին, ապա այստեղ ևս բավականին տարբեր խնդիրներ կան։ Հիմնականում նրանց մոտ ծնելիությունը ցածր է, ինչը նշանակում է, որ բնակչության թիվը դանդաղ է

[1] https://www.aravot.am/2022/10/22/1299705/

աճում, այստեղից էլ առաջանում է աշխատանքային ռեսուրսների սղության խնդիրը: Հետևաբար, հիշյալ երկրները փորձում են վարել ծնելիության բարձրացմանն ուղղված քաղաքականություն՝ միանվագ վճարումներ երիտասարդներին, նպաստներ, երեխայի ծննդյան համար պետական աջակցություն, երեխայի ամսական նպաստ, բազմազավակ ընտանիքների վարկեր և այլն[1]: Բնական է, որ մեր կողմից ավելի ընդունելի են զարգացած երկրներին բնորոշ խթանների կիրառումը:

Ավելին, մեզ անհրաժեշտ են հայ ընտանիքի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովմանը միտված քաղաքականության գործիքներ որպես սոցիալական ինստիտուտի վրա ազդելու հատուկ միջոցներ՝ նրա տնտեսական, վերարտադրողական և կրթական գործառույթների արդյունավետ իրականացման, ինչպես նաև բնակչության կյանքի որակի բարելավման համար, ինչն էլ կկանխորոշի ընտանիքի, անձի, հասարակության դրական սոցիալական զարգացումը՝ համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծման միջոցով:

Ժողովրդագրական քաղաքականության ինստիտուցիոնալ հիմքերը

Տարբեր երկրներում կիրառվող ընտանեկան քաղաքականության ուսանելի փորձից կարելի է առանձնացնել գործիքների հետևյալ խմբերը.

- օրենսդրական և ինստիտուցիոնալ աջակցություն (օրենսդրորեն ձևակերպված բոլոր իրավական ակտերը, որոնք որոշում են ամուսինների և երեխաների պաշտոնական կարգավիճակը՝ կապված մայրության և մանկության, ամուսնությունների և ամուսնալուծությունների պաշտպանությանը).
- տնտեսական միջոցառումներ (օրինակ՝ երեխաների համար սոցիալական նպաստների համակարգ, վճարովի մայրության արձակուրդ, «մայրության» (ընտանեկան) կապիտալ, հարկային արտոնություններ, արտոնյալ հիփոթեքային վարկեր և այլ միջոցներ).
- միջոցառումներ, որոնք այլընտրանք են ստեղծում ընտանիքի անմիջական խնամքին, հատկապես երեխայի համար (երեխաների համար նախադպրոցական հաստատությունների լայն ցանցի զարգացում).
- օգնություն ընտանիքին խնդրահարույց իրավիճակներում և աշխատանք գտնելու, բարելավելու ընտանեկան հարաբերությունները (ընտանեկան ծառայություններ).
- խթանող և կրթական գործունեություն (երիտասարդներին ամուսնության նախապատրաստում, իրազեկման միջոցառումներ և

[1] *Selfin Vikas Papriwal,Ravi Suri,Yael (2019-07-21): «The Growth Promise Indicators – 2019 report - KPMG | AE»: KPMG (en-US).*

դասախոսություններ բնակչության շրջանում, ընտանեկան խնդիրների լայն քննարկում լրատվամիջոցներում):

Իրավիճակն Արցախում և Հայաստանում

Մեր հայրենիքում զգալիորեն կարելի է մեծացնել պետության դերը ժողովրդագրական գործընթացների կառավարման գործում: Այն իրականացվում է որոշակի միջոցների կիրառմամբ և ունի տարբեր ուղղություններ (տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլն): Իհարկե, այս համակարգում կարելի է նշել բազմաթիվ թերություններ, բայց, այնուամենայնիվ, որոշակի բարելավումներ ևս կան: Հատկապես, Արցախում մշտապես նկատելի են երիտասարդ ընտանիքներին աջակցության տարբեր ծրագրեր, ինչի արդյունքում, մի շարք ծրագրերի շնորհիվ բնակչության թիվը էապես ավելացել է, ծնելիության աճի միտում է եղել: Նման փոփոխությունները վկայում են ժողովրդագրական իրավիճակի վրա պետական քաղաքականության ազդեցության մասին, ինչը նշանակում է, որ մենք պետք է բարելավենք մինչ օրս կիրառվող մեթոդները և գործիքակազմը: Օրինակ, Արցախում, Կառավարության որոշման համաձայն, Արցախի Հանրապետության գյուղական կամ քաղաքային բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրից կարող են օգտվել նաև Ստեփանակերտի բնակիչները: Սահմանված կարգով՝ բնակելի տան կառուցման համար պետությունը տրամադրում է մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ անհատույց ֆինանսական աջակցություն: Պետական ֆինանսական աջակցություն ապահովող մարմինը Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է[1]:

Իսկ Հայաստանում «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրն ուղղված է իրավական, ֆինանսական և կազմակերպչական համապատասխան մեխանիզմների ներդրման միջոցով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ

---

[1] *Տես՝ https://www.1lurer.am/hy/2021/07/19/%D4%B5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4-%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%A2%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A5%D5%AC%D5%AB-%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D6%81%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82/519712*

ընտանիքներին պետական աջակցության տրամադրմանը: Ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկը տրամադրվում է նվազագույնը 10 տարի մարման ժամկետով, առաջնային շուկայում առավելագույնը 7.5 տոկոսով, առանց սուբսիդավորման, իսկ երկրորդային շուկայում՝ առավելագույնը 9.5 տոկոսով, որից պետությունը սուբսիդավորում է Երևանում 2 տոկոսային կետի չափով (այսինքն՝ վարկառուի համար վարկի տոկոսը կազմում է առավելագույնը 7,5), իսկ ՀՀ մարզերում տրամադրված հիփոթեքային վարկերի համար՝ 4 տոկոսային կետի չափով (այսինքն՝ ՀՀ մարզերում վարկառուի համար վարկի տոկոսը կազմում է առավելագույնը 5.5): Ծրագրի շահառու կարող են լինել այն երիտասարդ ընտանիքները, որտեղ ամուսինները երիտասարդ են, և վերջիններիս տարիքների գումարը չի գերազանցում 70-ը, կամ երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնողը, ում տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ): Շահառուները պետք է ունենան եկամտի բավարար մակարդակ՝ ստանձնած վարկային պարտավորությունների կատարման համար[1]:

Հարկ է նկատել, որ մինչև 44-օրյա պատերազմը՝ 2019թ. ԱՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 148.0 հազ. մարդ, քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 56.7 տոկոս, գյուղականը՝ 43.3 տոկոս: 2019թ. տարեսկզբին ԱՀ մշտական բնակչության կազմում 48.9 տոկոսը կազմել են տղամարդիկ, 51.1 տոկոսը՝ կանայք: Բնակչության միջին տարիքը տարեսկզբի դրությամբ կազմել է 33.6 տարի, մասնավորապես, տղամարդկանց համար 32.1 տարի, կանանց համար՝ 35.1 տարի: ԱՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 26.4 տոկոս, աշխատունակ տարիքինը՝ 61.3 տոկոս, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 12.3 տոկոս: 2019թ. տարեսկզբի դրությամբ աշխատանքային տարիքի ամեն 1000 մարդուն բաժին է ընկել 629 մարդ՝ 0-15 տարեկան և կենսաթոշակային տարիքի: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչությունը կազմում է 7 տոկոսից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացած: Այդ ցուցանիշը 2019թ. տարեսկզբի դրությամբ ԱՀ-ում կազմել է 10.4 տոկոս: 2019թ. տարեսկզբի դրությամբ բնակչության 38.8 տոկոսը կենտրոնացված է եղել մայրաքաղաքում, իսկ ԱՀ Մարտունու շրջանում բնակվում է բնակչության 14.5 տոկոսը, Մարտակերտի շրջանում՝ 13.4 տոկոսը, Ասկերանի շրջանում՝ 11.5 տոկոսը, Հադրութի և Քաշաթաղի շրջաններում, համապատասխանաբար, 8.1 և 7.9 տոկոսը, Շուշիի շրջանում՝

[1] *http://www.hfyouth.am/am/Affordable_housing_for_young_families.html*

3.6 տոկոսը, Շահումյանի շրջանում՝ 2.2 տոկոսը: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԱՀ-ում արձանագրվել է 2336 ծնունդ, որից 52-ը կազմել են բազմապտուղ ծնունդները: Ծնվածների ընդհանուր թվաքանակից 2328-ը կազմել են կենդանի ծնվածները, իսկ 8-ը՝ մեռելածինները: Ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով, կազմել է 15.8 պրոմիլ: 2018թ. ծնելիության գումարային գործակիցը (բնութագրում է երեխաների միջին թվաքանակը, որ կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում, իր ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում) կազմել է 2.101 երեխա, ընդ որում, քաղաքային բնակչությանը՝ կազմել է 2.135, իսկ գյուղականինը՝ 2.042 երեխա: Հարկ է նշել, որ բնակչության պարզ վերարտադրության (երբ ծնողներին փոխարինող երեխաների սերունդը և ծնողների սերունդը հավասար են իրենց բացարձակ թվաքանակներով) համար անհրաժեշտ է 2.150 երեխա:

Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2018թ. կազմել է 28.0 տարեկան, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 24.9 տարեկան: 2018թ. ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և հաջորդ կարգի ծնունդների մասնաբաժինը կազմել է ընդամենը կենդանածինների 34.9 տոկոսը, քաղաքներում՝ 31.1 տոկոսը, գյուղական վայրերում՝ 41.1 տոկոսը: 2018թ. ԱՀ-ում արձանագրվել է 1185 մահվան դեպք, իսկ մահացության ընդհանուր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով կազմել է 8.0 պրոմիլ: 2018թ. մահվան դեպքերից 633-ը կամ 53.4 տոկոսը կազմել են տղամարդիկ, իսկ 552-ը կամ 46.6 տոկոսը՝ կանայք: Տղամարդկանց և կանանց մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբեր են նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշները ծննդյան պահից: Կյանքի սպասվող միջին տևողությունը ծննդյան պահից 2018թ. տղամարդկանց համար կազմել է 72.5 տարի, իսկ կանանց համար՝ 79.0 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 71.6 կանանց համար՝ 78.5 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար, 73.7 և 79.6 տարի: Հանրապետությունում արձանագրված բնակչության բնական հավելաճի ցուցանիշը 2018թ. կազմել է 1143 մարդ, իսկ բնական հավելաճի ընդհանուր գործակիցը՝ 7.7 պրոմիլ, 1000 բմակչի հաշվով:

Ամուսնություն և ամուսնալուծություն 2018թ. Հանրապետությունում արձանագրվել է ամուսնությունների 899 դեպք, ամուսնալուծության դեպքերը կազմել են 204 դեպք: Ամուսնության միջին տարիքը տղամարդկանց շրջանում 2018թ. կազմել է 28.6, իսկ կանանց մոտ՝ 24.7 տարեկանը, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը,

համապատասխանաբար, 27.8 և 24.0 տարեկանը: Միջպետական միգրացիայի ուղղությունների վերաբերյալ ստացված տվյալների համաձայն, այդ բնութագրիչներով հանրապետությունում պաշտոնապես հաշվառված եկողների թվաքանակը կազմել է 613 մարդ, ընդ որում՝ 544 մարդ ժամանել է ՀՀ-ից, 69 մարդ՝ այլ երկրներից, իսկ մեկնողների թվաքանակը նույն ժամանակահատվածում կազմել է 828 մարդ, ընդ որում՝ 755-ը մեկնել է ՀՀ, 5-ը՝ այլ երկրներ: 2018թ. եկողների թիվը, 1000 բնակչի հաշվով, կազմել է 4.2 պրոմիլ, մեկնողներինը՝ 5.2 պրոմիլ:

2018թ. միգրացիայի մնացորդի ցուցանիշը կազմել է – 147 մարդ[1]:

Վերը նշված ցուցանիշներին հարկավոր է հավելել նաև այն փաստը, որ Հայաստանում, օրինակ, գործազուրկների մեջ կանանց թիվը ոչ թե կրճատվում, այլ աճում է: Այն ներկայումս կազմում է շուրջ 62 տոկոս: «Մի կողմից մենք ուզում ենք կանայք ավելի շատ ներգրավվեն աշխատաշուկայում, որովհետև ունեն ավելի լավ մարդկային կապիտալ, մյուս կողմից ուզում ենք կանայք ավելի շատ երեխաներ ունենան, քանի որ դա պետության առաջընթացի ու ռազմավարական կարևորություն ունի, ուզում ենք կանայք ներգրավեն բանակում, տնտեսության մեջ, քաղաքականության մեջ[2]»: Ու այնպես է ստացվում, որ Պետության խնդիրների ահռելի մասը դնում ենք կանանց ուսերին՝ առանց ստեղծելու դրա համար անհրաժեշտ համակարգային պայմաններ: Ուստի պետք է հասկանալ, թե ինչպես է հնարավոր այս տարբեր նպատակները միմյանց հետ համատեղել այնպես, որ կինն ընտրություն կատարելու հնարավորություն ունենա և ցանկության դեպքում հնարավորություն ունենա համատեղելու անձնական կյանքը, աշխատանքը, ընտանիքը, հետաքրքրությունները և այլն: Կանանց տնտեսական զորեղացումն ու ֆինանսական կայունությունը կարևոր է. կանայք ունեն ավելի լավ մարդկային կապիտալ, մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում՝ քոլեջներ, բուհեր, կանայք ավելի մեծ տոկոս են կազմում ու կանայք ընդգրկված են տնտեսության այն ճյուղերում, որոնք ունեն ավելի բարձր արտադրողականություն, այսինքն՝ կանայք ավելի ուսյալ են, ավելի բարձր արտադրողականությամբ են աշխատում տնտեսության ճյուղերում: Գործոնները, իհարկե, տարբեր են՝ սկսած համակարգային, մշակութային խնդիրներից, կարծրատիպերից մինչև, օրինակ, երեխայի կամ ընտանիքի անդամի խնամքի համար պայմանների բացակայությունը: Հենց սրանց պետք է միտված լինի զբաղվածության ռազմավարությունը՝ ավելի

---

[1] *http://mss.nkr.am/?p=16739*

[2] *Հայաստանում կանանց շուրջ 62 տոկոսը կամ գործազուրկ է, կամ չի աշխատում ու չի փնտրում աշխատանք: https://news.am/arm/news/732026.html*

համակարգաստեղծ ինստիտուտներ ստեղծելով պայքարելու նաև առկա մշակութային խնդիրների ու կարծրատիպերի դեմ: Հայաստանում մեծ թիվ են կազմում 15-29 տարեկան երիտասարդները, ովքեր չեն աշխատում ու չեն սովորում. «Փաստացի, այդ երիտասարդների մոտ 80 տոկոսը բնակվում է մարզերում: Իսկ 15-29 տարեկան կանանց շուրջ 40 տոկոսն ընկնում է այս կատերագորիայի մեջ՝ կամ չեն աշխատում, կամ չեն սովորում: Բնական է, որ զբաղված են երեխայի կամ ընտանիքի անդամի խնամքով: Սա է պատճառը, որ պետք է թիրախավորել նաև ընտանիքի անդամի, երեխայի խնամքի նոր հաստատությունների ստեղծումը: Կարևոր է նաև մանկապարտեզների թվի ավելացումը: Պետք է նաև իրավական մեխանիզմներ ստեղծել, որ հայրը նույնպես ներգրավված լինի երեխայի խնամքում»[1]:

Քաղաքացիական հասարակության դերը

Կան նաև այլ հարցեր, որոնք առնչվում են պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններին՝ ընտանեկան և ժողովրդագրական խնդիրների լուծման ոլորտում: Սակայն պետական մարմինների հետ մեկտեղ ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում էական ներդրում կարող են ունենալ հասարակական կազմակերպությունները, անհատները, գործատուները, նրանց միավորող ասոցիացիաները, տեղական ինքնակառավարման մարմինները և այլ կազմակերպությունները: Արտասահմանյան երկրներում տարբեր օրինագծերի իրականացման փորձը ցույց է տալիս, որ կարևոր դեր է խաղում սոցիալական խմբերի և, ի վերջո, ողջ հասարակության շահերի համախմբումը: Նման համախմբումը պետք է սկսել հատկապես Արցախում առկա բազմաբնույթ խնդիրները հանգուցալուծելու համար: Այս առումով նման կարևոր նախաձեռնության օրինակ կարող է դասվել, «Սերունդ» ՀԿ-ի նախաձեռնությանը՝ Արցախում ծնելիությունը խթանելու նպատակով: «ՍԵՐՈՒՆԴ»-ը՝ Ծնելիության խթանման համահայկական հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրվել է 2021թ. հունվարի 21-ին և գործում է ՀՀ Սահմանադրության և այլ համապատասխան ու իրավական ակտերի համաձայն: Այն բարեգործական հիմնադրամ է, որի նպատակն է ծնելիության խթանմամբ հասնել մեզ անհավանական թվացող բնակչության թվերի, հայ մարդու բնութագրի սիմվոլ դարձնել բազմազավակությունը, ամեն գնով պահպանել գենետիկ ֆոնդը, բերել նոր հույս, լավատեսություն և հզոր ապագա ունենալու իրական հնարավորություն՝ գունավորելով ապագայի մասին պատկերացումներ մեր հայրենակիցների և աշխարհասփյուռ հայերի մտքերում: «Սերունդ»-ի հիմնադիրները գործի են

[1] *Նույն տեղում:*

անցել 2020-ի նոյեմբերի 9-ից հետո, գիտակցելով, որ ամեն ինչից զատ տեղի ունեցավ նաև ժողովրդագրական աղետ և որ անհրաժեշտ է ամեն կերպ խթանել ծնելիությունը, լինել այն ընտանիքների կողքին, որոնք ցանկանում են երեխա ունենալ: Ծրագիրը սկսվել է Արցախից, որտեղ ժողովրդագրական խնդիրն ավելի սուր է: Ակնհայտ է, որ եթե բնակչության թիվը մի քանի անգամ մեծ լիներ այնտեղ, ապա նման պատկեր չէինք ունենա: Հիմնադրամը ծրագրի մեկնարկային փուլում ընտրել է Արցախի երկու գյուղ՝ քիչ բնակեցված Չարեքտարն ու Եղծահողը: Օրինակ, Եղծահողում 17 ընտանիք է ապրում: Շահառուի հետ կնքվելիք պայմանագրում անպայման նշվում է, որ աջակցության տրամադրումը կդադարեցվի, եթե ընտանիքը լքի Արցախը: Եղծահողի երեք ընտանիքներում երեխաների լույս աշխարհ գալուց առաջ հայտեր են ներկայացվել հիմնադրամին: Այս երեխաները կլինեն հիմնադրամի առաջին շահառուները: Աջակցություն տրամադրվելու է՝ 16 տարի 8 ամիս անընդմեջ: Հիմնադրամի կայքի ստեղծման աշխատանքներն ավարտվել են, և արդեն մոտ 4.7 մլն դրամ գումար է հավաքվել: Նվիրատուների գերակշռող մասը Հայաստանից են, շատ են նաև Արցախից միացածները, հատուկենտ՝ Ռուսաստանից ու եվրոպական երկրներից: Սփյուռքի հայ համայնքներում դեռ տեղեկացված չեն ծրագրի մասին: Նվիրատվությունը կատարվում է կայքի միջոցով, գումարը փոխանցելուն պես տեղեկատվությունը հրապարակվում է կայքում, նվիրատուի անվան դիմաց նշվում է նվիրատվության հերթական թիվն ու նվիրած գումարի ընդհանուր չափը: Նվիրատուների տրամադրած գումարից ոչ մի դրամ չի հատկացվում ադմինստրատիվ կամ այլ ծախսերի՝ կլինի ինչ-որ տեղ գնալու, մարկետինգային գովազդի, թե աշխատավարձի համար: Այդ բոլոր ծախսերն իրականացնում են հիմնադիրները, ինչպես նաև մի քանի ընկերություն: Ամեն բան արվում է, որ նվիրատուների տրամադրած գումարն ամբողջությամբ հատկացվի երեխաներին: Նվիրատուների թվի ավելացմանը զուգահեռ հիմնադրամի ներկայացուցիչները մտադիր են ծրագիրն ընդլայնել՝ ընդգրկելով Արցախի մյուս համայնքները, Սյունիքի, Տավուշի սահմանամերձ գյուղերը: Սոցիալական աջակցությունը կնպաստի, որ ավելի շատ երեխաներ լույս աշխարհ գան.շատ դեպքերում մարդիկ գալիս են որոշման, որ պետք է երկրորդ, երրորդ երեխա ունենալ, բայց հաշվի առնելով ֆինանսական ծանր վիճակը՝ հետաձգում են երեխա ունենալը կամ էլ հետ կանգնում որոշումից»: Արցախի Հանրապետության սոցիալական զարգացման ու միգրացիայի նախարարության էջում հրապարակված տեղեկատվության համաձայն, երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը նշանակվում է ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝

-առաջին և երկրորդ երեխաների դեպքում՝ 300 000 հազար դրամ, իսկ եթե ծնողներից մեկն ունի հաշմանդամություն՝ 500 000 դրամ

երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 500 000 դրամ, չորրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 700 000 հազար դրամ:

Եզրակացություններ

Այսպիսով, ժողովրդագրական խնդիրները, որոնք առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, պահանջում են անհետաձգելի և ոչ ստանդարտ լուծումներ:

Առաջին հերթին, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը պետության գործառույթն է, իսկ մեր պարագայում՝ սրբազան պարտքը: Պետությունը պետք է ոչ միայն խթանի ծնելիությունը նյութական, մասնագիտական և բարոյա-հոգեբանական մեթոդներով, այլև մշակի և իրականացնի Արցախի և Հայաստանի ընտանիքների համար գիտականորեն հիմնավորված և արդյունավետ տարաբնակեցման ռազմավարություն:

Հաջորդ կարևոր քայլը քաղաքացիական հանրության ակտիվացումն է, ազգային արժեքների շուրջ համախմբումը և ժողովրդագրական խնդիրների լուծման մեջ ժողովրդի բոլոր հատվածների ներգրավվածության ապահովումը:

Առանձնահատուկ կարևորություն ունի նաև հայ ժողովրդագիրների կրթումը Հայաստանում և արտերկրում՝ հետագայում նրանց առջև դնելով Արցախի և Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ժողովրդագրության հստակ տեսլական և թիրախներ ձևակերպելու, դրանց իրականացման իրատեսական քայլեր մշակելու ազգային խնդիրներ:

Ժողովրդագրական խնդիրների ճիշտ ձևակերպման, դրանց արդյունավետ հանգուցալուծման մեջ անհնար է գերագնահատել Սփյուռքի դերը, որն առանձին ուսումնասիրության առարկա է:

Գրականություն

1.
1. World Population Reaches 8 Billion, www.nytimes.com
2. Բնական աճի ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրները. Բնակչության բնական աճի բանաձևը: https://podarilove.ru/hy/strany-s-naimenshimi-pokazatelyami-estestvennogo-prirosta/
3. https://orbeli.am
4. Հայաստանի համար բացվում են օգուտներ քաղելու հնարավորություններ ու հեռանկարներ https://www.aravot.am/2022/10/22/1299705/
5. Selfin Vikas Papriwal,Ravi Suri,Yael (2019-07-21): «The Growth Promise Indicators – 2019 report - KPMG | AE»: KPMG (en-US).
6. «Սերունդ». Որ Արցախում շատ երեխաներ ծնվեն
7. https://www.panorama.am/am/news/2022/11/14
8. Արցախում երիտասարդ ընտանիքների՝ բնակելի տներ կառուցելու պետաջակցության ծրագրից կարող են օգտվել նաև Ստեփանակերտի բնակիչները
9. https://www.1lurer.am/hy
10. Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան, http://www.hfyouth.am/am/Affordable_housing_for_young_families.html
11. Ժողովրդագրական իրավիճակը Արցախի Հանրապետությունում, http://mss.nkr.am/?p=16739
12. Հայաստանում կանանց շուրջ 62 տոկոսը կամ գործազուրկ է, կամ չի աշխատում ու չի փնտրում աշխատանք: https://news.am/arm/news/732026.html

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ տնտեսության տեսության և կառավարման ամբիոնը: